

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԲԱՅԱՆ ՄՈՒՇԵՂ ԱՎԵՏԻՔԻ

**ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ (ՀԱՄԵՄԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02-Հանրային իրավունք (սահմանադրական,
վարչական, մունիցիպալ, ֆինանսական, բնապահպանական,
Եվրոպական իրավունք, պետական կառավարում)
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2024

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

БАБАЯН МУШЕГ АВЕТИКОВИЧ

**ПРАВО НА НЕПРИКОСНОВЕННОСТЬ ЧАСТНОЙ ЖИЗНИ
(СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)**

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата
юридических наук по специальности 12.00.02- Публичное
право (конституционное, административное, муниципальное,
финансовое, экологическое, европейское право,
государственное управление)

ЕРЕВАН - 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի եվրոպական համալսարանի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Ա. Տխաբիսիմովա**


Առաջատար կազմակերպություն՝ իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ.Ա. Նազարյան**
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հունվարի 15-ին՝ ժամը 16:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփի Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի դեկտեմբերի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների թեկնածու



Ջ.Հ. Հայրապետյան

Тема диссертации утверждена на ученом совете Европейского университета Армении

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А.Г. Хачатрян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Л.А. Тхабисимова**

кандидат юридических наук **Г.А. Назарян**


Ведущая организация: **Институт философии, социологии и права НАН РА**

Защита состоится 15-го января 2025 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке Российско-Армянского университета.

Автореферат разослан 13-го декабря 2024 года.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук



Дж.А. Айрапетян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հետազոտության արդիականությունը. Ժամանակակից դարաշրջանը բնութագրվում է տեղեկատվության և տեղեկատվական գործընթացների դերի ուժեղացմամբ: Սա վերաբերում է ինչպես հանրային, այնպես էլ սահմանափակ հասանելիության տեղեկատվությանը, որը ներառում է ընտանեկան և անձնական գաղտնիքը: Ներկայումս գլոբալ տեղեկատվական տարածքում ինտեգրացիոն գործընթացների արդյունքում ի հայտ են գալիս տեղեկատվական անվտանգության ապահովման նոր սպառնալիքներ, որոնք զգալիորեն ազդում են անհատի ձևավորման և զարգացման վրա:

Այս հիմնախնդրի հետազոտման անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն յուրաքանչյուրի մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի պաշտպանության, այլև այդ պաշտպանության վիճակը բնութագրող՝ Հայաստանի Հանրապետության ազգային և անհատի շահերի հավասարակշռման կարևորությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բարձր տեմպերով պայմանավորված, ինչպես նաև համաշխարհային հաղորդակցական ցանցերի ստեղծման և անձնական տվյալների էլեկտրոնային բազաների ձևավորման ու այդ տվյալների փոխանցման և մշակման արագության բարձրացման, արհեստական բանականության և ռոբոտաշինական այլ տեխնոլոգիաների կիրառման ոլորտում ռիսկերի ու սպառնալիքների բացահայտման պայմաններում յուրաքանչյուր պետությունում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում մեծանում է մասնավոր կյանքի հետ առնչվող ընտանեկան և անձնական գաղտնիքների՝ որպես սահմանափակ հասանելիության տեղեկատվության իրավական պաշտպանության կարևորությունը: Ընդ որում, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության, հաղորդակցության ազատության ու գաղտնիության, տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատության միջև հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունը մեծանում է անձնական կյանքին պետական մարմինների և այլոց կողմից միջամտության սահմանները որոշելու տեսանկյունից:

Մարդու և քաղաքացու մասնավոր կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը հանդիսանում է պետության և անձի փոխհարաբերությունների ձևավորման սահմանադրական հիմնարար սկզբունքներից, որն առաջին հերթին ընկալվում է որպես հանրային կարգավորման ոլորտ, որտեղ պետությունը հանրային ներգործության հիմքով չի սահմանում անձի ազատության այս կամ այն աստիճանը, այլ միայն տվյալ իրավունքի իրացման ընթացակարգի շրջանակում կիրառում է Սահմանադրությամբ սահմանված համապատասխան սահմանափակումներ (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 31):

Հետազոտության առարկա թեմայի արդիականությունը բնութագրվում է նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական գաղտնիքների սահմանափակ հասանելիության կապին ուսումնասիրելու, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքները և դրա իրավական ռեժիմին բնորոշ հատկանիշները բացահայտելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ոչ միայն այդ իրավունքի իրավական բնույթն ու նշանակությունը, այլև նրա տեղն ու դերը մարդու և քաղաքացու

սահմանադրական իրավունքների համակարգում:

Միաժամանակ, անհրաժեշտ է նաև նկատել, որ, եթե մարդու և քաղաքացու մասնավոր կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի հարգումն ու պաշտպանությունը բխում է Սահմանադրությամբ ամրագրված հանրային իշխանության պարտականությունների բովանդակությունից (հոդվ. 3 մաս 2), ապա անձին հնարավորություն է տրվում ոչ միայն վերահսկել պետության կողմից երաշխավորված մասնավոր կյանքի անձեռնմխելիությանը կատարվող միջամտությունները, այլև ձեռնարկել իրավական միջոցներ այն պահպանելու և ոչ իրավաչափ միջամտությունները կանխելու համար:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքն իր էությամբ բարդ իրավական ինստիտուտ է, որը բաղկացած է անձի անհատական իրավագործություններից, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է իրավական պահպանություն և պաշտպանություն: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքն իր նորմատիվ բովանդակության տեսանկյունից հավաքական հասկացություն է, որը նշանակում է մասնավոր կյանքի անձեռնմխելիություն, որը համալիր փոխկապվածություն ունի ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և պատվի ու բարի համբավի պաշտպանության, բնակարանային անձեռնմխելիության, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլձևերի ազատության ու գաղտնիության, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության հետ: Այս համատեքստում հետազոտության առարկա հիմնախնդիրն համակարգային ուսումնասիրության ու վերլուծության անհրաժեշտություն ունի անձնական հիշատակված իրավունքների՝ որպես առանձին ինստիտուտների հարաբերակցության շրջանակում՝ հաշվի առնելով արտասահմանյան երկրների փորձը և միջազգային կազմակերպությունների պրակտիկան, մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրականացման իրավական կառուցակարգերի ու երաշխիքների համեմատությունը, Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների հնարավոր կատարելագործումը:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև այն փաստարկներով, որ իրավական համակարգերի արդիականացման և զարգացող հասարակական հարաբերությունների պայմաններում մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության ոլորտում ավելանում է նաև հանրային իշխանության մարմինների կողմից միջամտությունների ծավալը, որն առերևույթ կարող է վերջիններիս կողմից իրենց գործառույթների իրականացման ընթացքում նույնիսկ արդարացվել իբրև «անհրաժեշտ միջոց», ինչը մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից ձևավորել է իրավակիրառ պրակտիկա ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ՝ ժամանակակից սահմանադրական արժեքներ կրող երկրներում:

Նշված հանգամանքները որոշում են ատենախոսական հետազոտության արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը, դրա կառուցվածքը և քննարկվող հարցերի բովանդակությունը:

Թեմայի գիտական հետազոտման և մշակվածության աստիճանը.

Հայրենական իրավագիտության մեջ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի դերի, նշանակության և բովանդակության հիմնահարցերը երբևէ առանձին համալիր գիտական ուսումնասիրության չեն ենթարկվել: Ավելին, այս իրավունքի սահմանադրաիրավական ընկալման հիմնախնդիրները հետազոտվել

են միայն մարդու իրավունքների տեսության հիմնահարցերի շրջանակում և արտասահմանյան առանձին երկրների օրինակով համեմատական վերլուծության առարկա չեն հանդիսացել:

Ատենախոսության մեջ հետազոտվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնք մեծամասամբ ներկայացվել են օտարերկրյա իրավաբան գիտնականների տարբեր աշխատություններում: Սույն ատենախոսության գիտական արժեքը կայանում է նրանում, որ հայ իրավագիտության մեջ փորձ է արվել համալիր կերպով ուսումնասիրել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները՝ հաշվի առնելով միջազգային փորձը, այդ թվում՝ տարբեր երկրների սահմանադրական և օրենսդրական կարգավորումների համեմատական իրավական վերլուծության արդյունքները և միջազգային իրավական չափորոշիչների տեսական ու գործնական կարևորությունը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի արդիականացման ուղղությամբ:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ հետազոտության առարկա իրավունքի գործնական զարգացումը շատ ավելի արագ է ընթանում, քան դրա օրենսդրական կարգավորումները, տեսական հիմնավորումներն ու ուսումնասիրությունները: Այդ հանգամանքը վկայում է այն մասին, որ առկա հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, ինչը և կանխորոշել է սույն ատենախոսության նպատակը, խնդիրներն ու մեթոդաբանական հիմքը:

Հետազոտության օբյեկտը իրավական նորմերով կարգավորվող հասարակական այն հարաբերությունների ամբողջությունն է, որը զարգանում է Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան երկրներում մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի ձևավորման, իրականացման և պաշտպանության գործընթացում:

Հետազոտության առարկան կազմում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոլորտում հասարակական հարաբերությունները կարգավորող սահմանադրաիրավական նորմերը, արտասահմանյան երկրների օրենսդրությունը, միջազգային իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների բարձրագույն դատական ատյանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան, ինչպես նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության բնույթի և բովանդակության վերաբերյալ իրավագիտության մեջ շրջանառվող տեսակետներն ու հայեցակարգային բնույթի մոտեցումները:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակը միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով և ներպետական օրենսդրությունում միջազգային իրավական չափորոշիչների ներմուծմամբ պայմանավորված՝ մարդու և քաղաքացու մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի զարգացման հիմնական օրինաչափությունների բացահայտումն է և դրանց ազդեցության տեսագործնական հիմնախնդիրների գիտական ուսումնասիրության արդյունքում մարդու իրավունքների պաշտպանության իրավական երաշխիքների վերհանումը, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի արդիականացմանն ուղղված իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ուղղությունների ու առկա կառուցակարգերի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

ա) պարզել մարդու և քաղաքացու մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի էության ու բովանդակության տեսական-իրավական առանձնահատկությունները,

բ) ուսումնասիրել մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի զարգացման և իրավական հիմքերի ձևավորման պատմական նախադրյալները,

գ) իրականացնել մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրականացման ու պաշտպանության համեմատական իրավական հետազոտություն և վերլուծություն,

դ) առաջադրել մասնավոր կյանքի անձեռնմխելիության՝ որպես սահմանադրական սկզբունքի իրավաբանական ժամանակակից ու կիրառելի սահմանում, որը կարտահայտի ոչ միայն այդ սկզբունքի կիրառման գործնական նշանակությունը, այլև համահունչ կլինի Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին,

ե) բացահայտել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության երաշխավորման հիմքերը և սահմանափակման հիմնական հիմքերն ու սկզբունքները,

զ) կատարել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի՝ որպես մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքի համեմատական վերլուծություն,

է) բացահայտել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի միջազգային-իրավական չափորոշիչները և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դրանց ներդաշնակեցմանն ուղղված հնարավորությունները,

ը) ուսումնասիրել հանրային իշխանության դերի ազդեցությունը մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ապահովման համատեքստում,

թ) վեր հանել Հայաստանի Հանրապետությունում սույն իրավունքի իրացման հետ կապված ներկայիս հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման գործուն և արդյունավետ ուղիներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը. Հետազոտության

շրջանակներում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավագիտությանը հատուկ մեթոդներ: Ընդհանուր գիտական մեթոդներ են հանդիսացել համընդհանուր պատմական և տրամաբանական մեթոդները, ինչպես նաև համագիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են անալիզը, սինթեզը, դեդուկցիան և ինդուկցիան: Որպես հատուկ մեթոդներ՝ կիրառվել են համակարգային-կառուցվածքային, ձևական-իրավաբանական, համակարգային վերլուծության մեթոդները:

Հետազոտության ընթացքում նաև օգտագործվել են արտասահմանյան գիտական մշակույթին բնորոշ հետազոտության միջճյուղային, ինտեգրացվող և գլոբալիզացվող մոտեցումներով պայմանավորված հատուկ իրավական այնպիսի մեթոդներ¹, ինչպիսիք են՝ 1) համեմատական-իրավական մեթոդը, որով համադրվել են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոլորտում արտասահմանյան առանձին երկրներում սահմանադրական և օրենսդրական կարգավորումները, ինչի արդյունքում դուրս են բերվել այդ իրավունքի բնութագրման չափանիշներն ու զարգացման օրինաչափությունները, 2) իրավական հերմենևտիկան, որով հնարավոր է դարձել բացահայտել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության ինստիտուտի մի

¹ Տե՛ս Селютинна Е. Н., Холодов В.А., История и методология юридической науки /М., 2020, էջ 60-67,145,170:

շարք իրավական հասկացությունների իրական բնույթն ու բովանդակությունը, ստեղծել իրավական նորմերի բովանդակության առավել արդյունավետ ընկալման մեթոդաբանական հիմք, 3) պատմական-իրավական մեթոդը², որով հնարավոր է դարձել հետազոտել «մասնավոր կյանքի անձեռնմխելիություն» իրավական սկզբունքի առանձնահատկությունը որոշակի պատմական ժամանակաշրջանում, վերլուծել դրա ձևավորման պատմական նախադրյալները և զարգացման հիմնական հեռանկարները:

Հետազոտության տեսական հիմքը. Ատենախոսության տեսական հիմքը կազմել են սահմանադրական իրավունքի, պետության և իրավունքի տեսության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ ընդհանուր գիտական և գիտամեթոդական աշխատությունները: Հետազոտությունը կատարելիս օգտագործվել են հետևյալ հայ հեղինակների աշխատանքները՝ Ավագյան Ռ., Այվազյան Վ., Ափոյան Ռ., Ղամբարյան Ա., Հովհաննիսյան Գ., Մինասյան Լ., Մուրադյան Մ., Պողոսյան Վ., Սարգսյան Ա., Սարգսյան Ն. և ուրիշներ:

Մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պատմական ասպեկտները վերլուծելիս օգտագործվել են պրոֆ. Ռ. Ավագյանի, Ա. Բրատկոյի, Ս. Գոլոդայի, Ի. Իսանայի, Յու. Տիտովայի, Կ. Նոլկաչևայի և այլոց աշխատանքները:

Առավել հարուստ գիտական ուսումնասիրություններ և մասնավոր կյանքի անձեռնմխելիության սկզբունքի ու սահմանադրական իրավունքի տեսության հիմնահարցերի խորքային հետազոտություններ կատարվել են Լ. Մինասյանի, Գ. Բրեյբենթի (*Braibant G.*), Վ. Բարբինայի, Ջ. Կամերոնի (*J. Cameron*), Մ. Սըք Ֆարլենդի (*Michael McFarland*), Բ. Մարսենիսի (*B. Marcesinis*), Մ.Յանիսի (*M.W. Janis*), Ն. Վոլոշկինայի, Մ. Պետրոսյանի, Ռ. Քեյի (*R.S. Kay*), Յու. Տելինայի, Ե. Ֆիլիմոնավայի և այլոց կողմից:

Սույն հետազոտության թեմային առնչվող առանձին հարցերի կապակությամբ համապարփակ ուսումնասիրություններ հանդիպում են հատկապես Ռ. Ափոյանի, Լ. Մինասյանի, Յու. Տելինայի, Մ. Շչերբակովայի, Տ. Պոպովայի դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների շրջանակներում:

Հետազոտության նորմատիվ հիմքը. Աշխատության նորմատիվ հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրացմանն առնչվող «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և փոխկապակցված այլ օրենքները, ինչպես նաև ենթաօրենսդրական այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրացմանը, պաշտպանությանը և կիրառմանը: Աշխատանքում հատուկ ուշադրություն է հատկացվել միջազգային իրավական ակտերի ուսումնասիրությանը, որոնք շարքում հատուկ տեղ են զբաղեցնում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը, ԱՊՀ-ի մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, Մարդու իրավունքներն և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և միջազգային այլ դատարանների իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաև Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված վերաբերական իրավական ակտերը:

² Տե՛ս **Козлова Н.Н., Смирнова Н.М.**, Кризис современных методологий // Социологические исследования. 1995. No 11. Էջ 12-23:

Բացի վերոնշյալից՝ հետազոտության իրավական հիմքն են կազմում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարգավորող տարբեր երկրների սահմանադրություններն ու նորմատիվ իրավական ակտերը:

Հետազոտության էմպիրիկ հիմքը. Հետազոտության էմպիրիկ հիմքն են կազմում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպական միության արդարադատության դատարանի, Հայաստանի Հանրապետության և այլ երկրների դատարանների դատական պրակտիկան, միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության վերլուծական և վիճակագրական նյութերը, Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան երկրներում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրացման, իրավակիրառ պրակտիկայի նյութերը, ինչպես նաև հեղինակի գիտամանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերված փորձը:

Հետազոտության գիտական նորոյթը. Ատենախոսության մեջ առաջին անգամ համապարփակ վերլուծության են ենթարկվել մարդու և քաղաքացու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի էությունն ու սահմանադրաիրավական բովանդակությունը, մասնավոր կյանքի անձեռնմխելիության՝ որպես առանձին սահմանադրաիրավական ինստիտուտի, ճանաչման, երաշխավորման ու ապահովման հիմնախնդիրները՝ բացահայտելով այդ իրավունքի տեղն ու դերը մարդու սահմանադրական իրավունքների համակարգում, ինչպես նաև հետազոտվել է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծագման և զարգացման պատմական գործընթացը, առաջադրվել է այդ իրավունքի իրականացման սահմանների և սահմանափակումների հիմնախնդիրների լուծման գործառնական նշանակությունը:

Համալիր ուսումնասիրության արդյունքում կատարվել են ոչ միայն հայեցակարգային բնույթի տեսական եզրահանգումներ, այլ նաև ներկայացվել են ՀՀ գործող օրենսդրական ակտերի կատարելագործմանն ուղղված մի շարք գործնական առաջարկություններ, սահմանվել են նոր հասկացություններ, առաջադրվել գիտական կոնկրետ մոտեցումներ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության շրջանակներում՝ մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական ու կառուցակարգային երաշխիքների ամրապնդման համար:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության ընթացքում արված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա **պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.**

1. Ատենախոսությամբ հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ որպես բնական և անօտարելի իրավունք, անհրաժեշտ է ընկալել որպես սահմանադրությամբ նախատեսված և պաշտպանվող մարդու և քաղաքացու հնարավոր վարքագծի տեսակ ու միջոց՝ սեփական կյանքի բնույթի ընտրության ու հաղորդակցության ազատության, ինչպես նաև ինքնորոշման ու անկախության շրջանակում որոշելու իր մասնավոր կյանքի, այդ թվում մասնավոր իրավական և իրավական կարգավորում չենթադրող հարաբերություններում հարցերը ինքնուրույն լուծելու նպատակով:

2. Կարևորելով մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի՝ որպես իրավական համակարգի հավաքական ինստիտուտի գործառնական նշանակությունը՝ ատենախոսության շրջանակում վեր են հանվել այդ իրավունքի կառուցվածքն ու բաղկացության տարրերը, որպիսիք են՝

ա) մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը (որպես մասնավոր կյանքի

գաղտնիք ընկալվում են անձնական, ընտանեկան, ինչպես նաև՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, այլ ձևերի հաղորդակցությունների, կրոնի ընտրության, եկեղեցական խոստովանության, բժշկական, փաստաբանական, նոտարական, նախաքննական, հարկային, բանկային, առևտրային, կտակի և այլ գաղտնիքները),

բ) անձնական տվյալների պաշտպանության իրավունքը (անձի վերաբերյալ տեղեկատվության հավաքումը, մշակումը, վերլուծությունն ու օգտագործումը պետք է սահմանվի բացառապես օրենքով սահմանված նպատակով ու հիմքերով),

գ) բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, որը ներառում է ինչպես բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական սկզբունքը, այնպես էլ այդ իրավունքի՝ սահմանադրությամբ և օրենքով նախատեսված նպատակով ու հիմքերով սահմանափակումները,

դ) անձի ազատ զարգացման իրավունքը, որն իր գործառնական նշանակությամբ ենթադրում է պատվի, արժանապատվության, գործարար համբավի, ազգային պատկանելության, մայրենի լեզվով հանդես գալու, շփման լեզվի ազատ ընտրության, խղճի, դաստիարակության, ուսման, մշակութային գործունեության, ձեռնարկատիրության ազատության իրավունքների ամբողջություն:

3. Կարևորելով *հեղազոտման առարկա հիմնախնդրին* առնչվող պատմաիրավական վերլուծությունների և ներկայիս դրական և դոկտրինալ ընկալումները՝ աշխատանքում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ հասարակական կյանքի տարբեր փուլերում զարգացում ապրած մասնավոր կյանքի անձեռնմխելիությունն ինքնին անհրաժեշտ է ընկալել անձի հետևյալ իրավագործությունների միասնության շրջանակում, դրանք են՝ ա) մասնավոր կյանքի ապօրինի միջամտություններից պաշտպանված լինելու հնարավորություն, բ) մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի անխոչընդոտ իրացման հնարավորություն, գ) մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը չխախտելու պահանջի իրավունք, դ) ոտնձգության դեպքում հանրային իշխանության պաշտպանությանն ապավինելու իրավունք:

4. Ընդհանրացնելով արտասահմանյան առանձին երկրների սահմանադրաիրավական կարգավորումների համեմատական իրավական վերլուծության արդյունքները և միջազգային իրավական պրակտիկան՝ ատենախոսությամբ բացահայտվել են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոլորտի հիմքում ընկած իրավական հետևյալ չափորոշիչները, որոնք էական նշանակություն կարող են ունենալ Հայաստանի Հանրապետության հետազոտման առարկա ոլորտի օրենսդրության զարգացման ու ներդաշնակեցման համար.

ա) մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքն անհրաժեշտ է ընկալել որպես մասնավոր կյանքն անհիմն միջամտությունից, իսկ անձնական կյանքի վերաբերյալ տեղեկությունները ոչ իրավաչափ շրջանառությունից և հասանելիությունից պաշտպանելու իրավունք,

բ) մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը չպետք է նույնացվի դրա կամայական հանրայինացումից զերծ պահելու իրավունքի հետ,

գ) մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը բովանդակում է նաև ոչ անձնական բնույթի հարաբերությունների շրջանակ, հետևաբար այդ անձեռնմխելիության պաշտպանությունն ինքնին ներառում է ոչ միայն ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, այլ նաև՝ այլ մարդկանց հետ հարաբերությունների հաստատման և զարգացման իրավունքը:

5. Միաժամանակ, ընդհանրացնելով միջազգային իրավական և սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությունը, ատենախոսությամբ հիմնավորվել է իրավական հետևյալ դիրքորոշումը, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության գաղտնիության և ազատության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքն անհրաժեշտ է ընկալել որպես մարդուն տրամադրված և միաժամանակ պետության կողմից երաշխավորված հնարավորությունների շրջանակ՝ ա) վերահսկելու իր վերաբերյալ տեղեկատվությունը, բ) կանխելու կամ խոչընդոտելու իրեն առնչվող անձնական բնույթի տվյալների տարածումը: Իսկ դա նշանակում է, որ մարդն ինքը կարող է որոշել, թե իր վերաբերյալ ինչպիսի տեղեկատվությունը կարող է հանդիսանալ մասնավոր կամ անձնական կյանքի գաղտնիք, և ըստ անհրաժեշտության՝ ինչպիսի միջոցներ կարող է ձեռնարկել այդ իրավունքի պաշտպանության առումով:

6. Միաժամանակ, ուրվագծելով միջազգային և ներպետական իրավական ակտերի հարաբերակցության սահմանները և շրջանակը, ինչպես նաև հիմք ընդունելով համակարգային վերլուծության արդյունքները՝ որպես տրամաբանական շարունակություն, աշխատանքում հիմնավորվել են հետևյալ մոտեցումները, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքն էական նշանակություն է ստացել հատկապես այն հանգամանքներով պայմանավորված, որ՝

մի կողմից՝ այդ իրավունքն արդեն իսկ իր հիմնարար նշանակությունն է ձեռք բերել՝ մասնավորապես միջազգային իրավունքի մի շարք հիմնարար փաստաթղթերով ամրագրման անհրաժեշտությամբ (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (հոդվ. 12), ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրում (հոդվ. 17), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (հոդվ. 8), Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիայում (հոդվ. 11), ԱՊՀ-ի Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում (հոդվ. 9) և այլն),

մյուս կողմից՝ միջազգային իրավական համակարգի հետագա արդիականացման արդյունքում մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքն անհրաժեշտ է ընկալել որպես համալիր և միաժամանակ համընդհանուր համակարգ, որը կոչված է պաշտպանելու, այդ թվում՝ պետությունների սահմանադրական կարգավորումների մակարդակում, մասնավոր կյանքի առանձին կողմերի՝ բնակարանի անձեռնմխելիության, հաղորդակցության գաղտնիության, անձնական կյանքի գաղտնիության և անհատական տվյալների պաշտպանության իրավունքները:

Իսկ ներկայացված մոտեցումների հիման վրա կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը մարդու և քաղաքացու այն հիմնարար իրավունքներից է, որն ունի իր ինքնուրույն նորմատիվային հիմքը ինչպես միջազգային իրավական, անպես էլ ներպետական իրավական կարգավորումների մակարդակում:

7. Ատենախոսությամբ հիմնավորվել է նաև այն դիրքորոշումը, ըստ որի մասնավոր կյանքի անձեռնմխելիության երաշխավորումը պետությունների պոզիտիվ այն պարտավորությունն է, որով ապահովվում է հավասարակշռությունը ազգային անվտանգության ապահովման և խոսքի ազատության, հաղորդակցության ու անձնական կյանքի գաղտնիության, բնակարանի անձեռնմխելիության ապահպանության միջև: Ընդ որում, այդպիսի հավասարակշռության պահպանումը

անհրաժեշտ ու կարևոր պայման է, քանի որ պետության կողմից մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը ենթադրում է հետևյալ մի շարք իրավական չափորոշիչների առկայությունը՝

ա) անձի անհատական տվյալների՝ բացառապես օրենսդրությամբ ընտրված նպատակով և նշանակությամբ օգտագործում,

բ) այդ իրավունքի անհարկի և ոչ իրավաչափ սահմանափակումն ինքնին նշանակում է պատասխանատվության ենթարկել պաշտոնատար այն անձին, ում մեղավորությամբ խախտվել է այդ իրավունքը,

գ) պետական իշխանության մարմինների նկատմամբ համընդհանուր վստահության ամրապնդում,

դ) այդ իրավունքի արդյունավետ իրացման նկատմամբ պետական պատշաճ վերահսկողության երաշխավորում,

ե) մարդու խոսքի, կարծիքի արտահայտման, կրոնական դավանանքի կամ համոզմունքների ազատության իրավունքի և հիմնարար այլ ազատությունների պաշտպանություն,

զ) պետության համբավի բարձրացման ու պաշտպանության գործընթացներին ներգրավվածություն,

է) պետության քաղաքական գործընթացներին ակտիվ մասնակցություն և այլն:

Հետազոտության տեսական նշանակությունը. Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրավակարգավորումների ոլորտում մշակվել են նոր գիտական առաջարկություններ և դիտարկումներ, որոնք հիմնված են եղել ոլորտի տեսական և գործնական բազայի ուսումնասիրության վրա:

Բոլոր առաջարկներն ու դիտարկումները ձևավորվել են ատենախոսության հետազոտության հիման վրա, ինչը կարելի է համարել սահմանադրական իրավունքի տեսության մեջ որոշակի ներդրում: Դրանք կարող են հիմք հանդիսանալ ինչպես ոլորտի սահմանադրական և օրենսդրական կարգավորումների կատարելագործման, այնպես էլ՝ հետագա տեսական հետազոտությունների համար: Առաջարկների, դիտարկումների և հետևությունների արժանահավատությունը տեսականորեն հիմնավորված է հետազոտության ընթացքում օգտագործված գիտական մեթոդաբանությամբ, գիտական և նորմատիվային աղբյուրների լայն շրջանակով:

Հետազոտության գործնական նշանակությունը. Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ մշակվել են այնպիսի առաջարկներ և դիտարկումներ, որոնք կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական և օրենսդրական կարգավորումների կատարելագործման ընթացքում:

Հեղինակի կողմից մշակվել են հստակ առաջարկներ, որոնք միտված են լուծելու մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի իրագործման և պաշտպանության ընթացքում առաջացած խնդիրները, մասնավորապես՝ ոլորտին առնչվող իրավական ակտերի ու համապատասխան դրույթների կատարելագործման մասով:

Հետազոտությունը կարող է օգտագործվել բակալավրի և մագիստրոսական մասնագիտացման ծրագրերի շրջանակներում՝ որպես դասավանդվող նյութ այնպիսի առարկաների համար, ինչպիսիք են՝ «Սահմանադրական իրավունք», «Համեմատական սահմանադրական իրավունք», «Մարդու իրավունքներ», «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք» դասընթացները, նաև՝

գիտական հետազոտություններում, ինչպես և՛ բոլոր այն դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է մարդու և քաղաքացու մասնավոր կյանքի ու դրա անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությանը:

Միաժամանակ, առկա հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են նպաստել իրավաստեղծ գործունեության իրականացմանը՝ ՀՀ Սահմանադրության և ընթացիկ օրենսդրական դրույթների կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Հետազոտության հիմնական արդյունքները տեղ են գտել հեղինակի գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են համապատասխան գիտական հանդեսներում և մենագրության մեջ: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են նաև տարբեր գիտաժողովների, սեմինարների և առանձին քննարկումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը. Հիմք ընդունելով առաջադրված նպատակներն ու խնդիրները և հետազոտության տրամաբանությունը՝ ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, ինը ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Այն կազմում է 188 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության թեմայի արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակները, նպատակներին հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմունքները, գիտական նորույթը, պաշտպանության են ներկայացվում գիտական նորույթներ, ատենախոսության գիտագործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների համակարգում» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆներից:

Ատենախոսության առաջին գլխի՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի էությունն ու բովանդակությունը. տեսական-իրավական հիմնահարցերը» վերտառությամբ առաջին պարագրաֆում քննարկման առարկա են դարձել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի էության ու բովանդակության տեսական հիմնահարցերը: Վերլուծելով իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումները, ինչպես նաև դրանց համակարգային դերն ու նշանակությունը, սահմանադրական և օրենսդրական կարգավորումների ներկա վիճակը, Հեղինակը արձանագրել է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ որպես իրավական համակարգի ինստիտուտ, ունի իր բաղկացությունը, որի կառուցվածքային տարրերի, այդ թվում՝ մասնավոր կյանքի գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության, բնակարանի անձեռնմխելիության և անձի ազատ զարգացման իրավունքներն իրենց իրավաընկալման ու գործառնական նշանակությամբ կարևոր նշանակություն են ձեռք բերում ոչ այնքան հիմնահարցի վերաբերյալ մեկ միասնական դեֆինիցիա ունենալու, այլ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծավալը ճիշտ

գնահատելու մեջ:

Ատենախոսության առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները. պատմաիրավական վերլուծություն» վերտառությամբ, քննարկվել են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ձևավորման չափանիշները նախապետական շրջանից և հին աշխարհի ժամանակաշրջանից մինչև ներկա դարաշրջանը: Հետազոտման առարկա հիմնախնդրի պատմական վերլուծությունները՝ ներկայիս դոկտորինալ ընկալումների համատեքստում, Հեղինակին թույլ են տվել արձանագրելու, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիությունն ընկալվում է որպես անձի՝ մասնավոր կյանքի ապօրինի միջամտություններից պաշտպանված լինելու և անձեռնմխելիության այդ իրավունքի անխոչընդոտ իրացման հնարավորությունների, ինչպես նաև՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը չխախտելու պահանջի և այդ իրավունքի նկատմամբ ոտնձգության դեպքում հանրային իշխանության պաշտպանությանն ապավինելու իրավունքների ամբողջություն:

Ատենախոսության առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հանրային իրավական կարգավորումը արտասահմանյան երկրներում» համակարգային վերլուծության են ենթարկվել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավական կարգավորման հիմնահարցերը արտասահմանյան առանձին երկրներում: Վերլուծելով մասնավոր կյանքի, անձնական և ընտանեկան գաղտնիքների անձեռնմխելիության իրավունքի կայացման փուլերը, հիմնական ուղղություններն ու զարգացման խնդիրները մայրցամաքային և անգլո-սաքսոնական իրավական համակարգերի երկրներում, հեղինակը նկատել է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի էության, ամրագրման, իրականացման ու սահմանափակման վերաբերյալ առկա մոտեցումները խիստ տարբեր են հատկապես այդ իրավունքի բովանդակային նշանակության տեսանկյունից:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության ապահովման սահմանադրաիրավական կառուցակարգերը» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պաշտպանության երաշխիքները» վերտառությամբ, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության համատեքստում վերլուծելով մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը երաշխավորող իրավական ակտերը, հեղինակը գտնում է, որ դրանք պետք է գործեն ոչ միայն ինքնաբերաբար և անմիջականորեն՝ անկախ սուբյեկտիվ կամքից կամ կամայական սուբյեկտիվ ընկալումից, այլև՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին է պետության կառուցվածքը և որ քաղաքական ուժերին է վերապահված իշխանության իրականացման իրավունքը: Միաժամանակ, Հեղինակը արձանագրում է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի՝ որպես մարդու անբաժանելի և անօտարելի իրավունքի միայն ճանաչումը բավարար չէ այն ապահովելու համար, քանի որ նման իրավունքը կարիք ունի ինչպես պահպանության, այնպես էլ՝ պաշտպանության:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պաշտպանության երաշխիքները և սահմանափակման սահմանադրաիրավական հիմքերը օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության

ընթացքում» վերտառությամբ, դիտարկվել են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության ոչ միայն երաշխիքների, այլև սահմանափակման սահմանադրաիրավական հիմքերի հիմնահարցերը հատկապես օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության գործընթացներում: հիշյալ հարցերի հետազոտության շրջանակում <Եղինակը արձանագրել է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը չի կարող անսահմանափակ լինել, այն պետք է իրականացվի կոնկրետ և հստակ սահմանված ժամանակային տիրույթում, օրենսդրությամբ պետք է սահմանված լինեն դատական հսկողության մեխանիզմներ այդ սահմանափակումների իրավաչափության նկատմամբ:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնահարցերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում» վերտառությամբ, քննարկվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի հիմնահարցերը: Մասնավորապես, ընդհանրացնելով այդ դատարանի նախադեպային պրակտիկան, Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների ներդաշնակեցման նկատառումներով պայմանավորված՝ Հեղինակի կողմից ներկայացվել են իրավական այնպիսի չափորոշիչներ, որոնք կարևոր ու էական նշանակություն ունեն, որպիսիք են՝

մասնավոր կյանքի հարգումը որպես այդ կյանքի նկատմամբ անհիմն միջամտությունից և անձնական կյանքի վերաբերյալ տեղեկությունները պաշտպանելու իրավունք,

կամ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը չպետք է նույնացվի դրա կամայական հանրայնացումից զերծ պահելու իրավունքի հետ,

կամ՝ մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը ներառում է նաև ոչ անձնական բնույթի հարաբերությունների շրջանակ, որի պաշտպանությունն ինքնին ներառում է ոչ միայն ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, այլ նաև՝ այլ մարդկանց հետ հարաբերությունների հաստատման և զարգացման իրավունքը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի իրացման ժամանակակից հիմնախնդիրները << սահմանադրական և միջազգային իրավունքի հարաբերակցության շրջանակում» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Ատենախոսության երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության՝ որպես սահմանադրական սկզբունքի իրավաընկալման ժամանակակից հիմնախնդիրները» վերտառությամբ, քննարկվել է մասնավոր կյանքի անձեռնմխելիության՝ որպես սահմանադրական սկզբունքի և այդ իրավունքի հարաբերակցության, բովանդակության, նշանակության ու իրավաընկալման ժամանակակից հիմնախնդիրները: Հետազոտման առարկա հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքներով Հեղինակը արձանագրել է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը որպես սահմանադրական ելակետային գաղափարի վրա խարսխված իրավունք ունի բովանդակություն, այդ թվում՝ բովանդակությունը կազմող տարրեր, ինչպիսիք են՝ անձնական և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի, բնակարանի անձեռնմխելիության, հաղորդակցության գաղտնիության և ազատության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքները:

Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Հանրային

իշխանությունը և մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ապահովումը իրավական համակարգի արդիականացման պայմաններում» վերտառությամբ, քննարկվել են հանրային իշխանության մարմինների կողմից մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ապահովման առանձնահատկությունները: Դա պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ այդ իրավունքի բովանդակությունն է կանխորոշում հանրային իշխանության մարմինների վարքագիծը՝ նրանց ոչ միայն պարտավորեցնելով ձեռնպահ մնալ անհատի կյանքի՝ այդ իրավունքներով պաշտպանվող ոլորտների անթույլատրելի միջամտությունից, այլև անհրաժեշտ դեպքերում իրականացնել ակտիվ գործողություններ՝ կանխելու անձի իրավունքների խախտումները:

Ասեռնախոսության երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի պաշտպանության միջազգային իրավական չափորոշիչները» վերտառությամբ, քննարկման առարկա հարցերի շրջանակում միջազգային իրավական առանձին ակտեր լիարժեք չեն արտացոլում ժամանակակից մարտահրավերներին համարժեք կարգավորումները, ինչը ենթադրում է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի միջազգային պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում միջազգային իրավական ակտերի միասնականացմանը՝ իրավունքի սուբյեկտների համար դրա առավել արդյունավետ կիրառումն ապահովելու համար: Այս տեսանկյունից Հեղինակը նպատակահարմար է համարում նախապատրաստել միասնական իրավական պայմաններ, որոնք թույլ կտան առավելագույնս արդյունավետ երաշխավորել նշված իրավունքները, ինչպես նաև իրականացնել յուրաքանչյուր անձի պաշտպանության գործընթացը տարբեր միջամտություններից և ոսնձգություններից:

Հիշատակված հիմնավորումներով պայմանավորված, Հեղինակն արձանագրում է, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության երաշխավորումը դա պետությունների պոզիտիվ այն պարտավորությունն է, որով ապահովվում է հավասարակշռվածություն ազգային անվտանգության ապահովման և խոսքի ազատության, հաղորդակցության ու անձնական կյանքի գաղտնիության, բնակարանի անձեռնմխելիության միջև:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները Հեղինակը կատարել է հետևյալ եզրահանգումները.

1. Իրավունքի զարգացման ժամանակակից փուլում խնդիրը ոչ այնքան հիմնահարցի վերաբերյալ մեկ միասնական դեֆինիցիա ունենալու մեջ է, այլ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի ծավալը ճիշտ գնահատելու: Այս առումով հիմնախնդրի շրջանակներում հարկ է դիտարկել անձի ինքնորոշման իրավունքի, նրա ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, ինքնավարության, այլ անձանց հետ կապերի հարցերը, ինչը սկզբունքային նշանակություն ունի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի կարգավորման առարկային՝ հանրային իշխանության մարմինների միջամտության սահմաններն ուղղաձեռնելու տեսանկյունից:

2. Վերլուծելով արտասահմանյան երկրներում մասնավոր կյանքի, անձնական և ընտանեկան գաղտնիքների անձեռնմխելիության իրավունքի կայացման փուլերը, հիմնական ուղղություններն ու զարգացման խնդիրները՝ կատարվել են հետևյալ եզրահանգումները՝

առաջին՝ մայրցամաքային իրավական համակարգի երկրներում և այն երկրներում, որտեղ գործում է անգլո-սաքսոնական իրավական համակարգը,

մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի բնորոշումն ու ամրագրումն ունեն էական տարբերություններ: Անգլո-սաքսոնական իրավական համակարգի երկրներում ավանդաբար սահմանադրությունները չեն պարունակում մասնավոր կյանքի իրավունքի մասին ուղղակի նշում (Մեծ Բրիտանիայում առկա չէ գրավոր սահմանադրություն, և այդ իրավունքի աղբյուր են դատական նախադեպերը, ԱՄՆ-ում մասնավոր կյանքի իրավունքը բխում է «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության մասին» օրենքի մի շարք հոդվածների դատական մեկնաբանությունից): Այս խնդրի լուծման միասնական մոտեցում մայրցամաքային իրավունքի համակարգի երկրներում առկա չէ, բայց նրանց գերակշիռ մասը գնացել է հիմնական օրենքում մասնավոր կյանքի իրավունքի նորմերն ամրագրելու ուղով: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանադրական ամրագրումն առավելապես իրականացվել է մայրցամաքային իրավական համակարգի երկրների նորագույն սահմանադրություններում, որոնք ընդունվել են Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո,

երկրորդ՝ անգլո-սաքսոնական իրավական համակարգի ներկայացուցիչները, որոնք արտահայտվում են մասնավոր կյանքի իրավունքի սահմանադրական ամրագրման դեմ, մատնանշում են այն հանգամանքը, որ «մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք» հասկացությունը չափազանց լայն է և դրա ներգործության շրջանակների սահմանման հարցում կան լուրջ ղեկավարություններ, ուստի նպատակահարմար չէ նորմատիվ իրավական ակտերում ամրագրմամբ սահմանափակել այդ շրջանակները:

3. Ընդհանրացնելով միջազգային իրավական և սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությունը՝ կատարվել է հետևյալ եզրահանգումը, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության գաղտնիության և ազատության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքն անհրաժեշտ է ընկալել որպես մարդուն տրամադրված և միաժամանակ պետության կողմից երաշխավորված հնարավորությունների շրջանակ՝ ա) վերահսկելու իր վերաբերյալ տեղեկատվությունը, բ) կանխելու կամ խոչընդոտելու իրեն առնչվող անձնական բնույթի տվյալների տարածումը: Իսկ դա նշանակում է, որ մարդն ինքը կարող է որոշել, թե իր վերաբերյալ ինչպիսի տեղեկատվությունը կարող է հանդիսանալ մասնավոր կան անձնական կյանքի գաղտնիք, և, ըստ անհրաժեշտության, ինչպիսի միջոցներ կարող է ձեռնարկել այդ գաղտնիքի պահպանության և իրավունքի պաշտպանության առումով:

4. Հայ իրականության մեջ մասնավոր կյանքի անձեռնմխելիության նկատմամբ ոտնձգությունների նախազգուշացման, կանխման, բացահայտման, ընդհանուր առմամբ, այդ իրավունքի պահպանության և պաշտպանության ոչ պատշաճ վիճակի հիմնական պատճառները օրենսդրական ոչ համապարփակ կարգավորումներն են, այդ բնագավառում իրենց իրավունքների մասին հանրային իրազեկվածության պակասը, իրավական ավանդույթների, նախադեպերի, պրակտիկայի բացակայությունը, ինչպես նաև՝ իրավապահ և իրավակիրառ մարմինների փորձի պակասը:

5. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանադրական ամրագրումը հնարավորություն է տալիս ոչ միայն արդյունավետ կերպով իրացնելու դրա հետ սերտորեն կապված կամ դրա մասը համարվող իրավունքները, այլև բացահայտելու այդ իրավունքի բովանդակությունը և կարգավորման տիրույթը, այն դիտարկելու այլ իրավունքների հետ համակցության և փոխկապակցվածության մեջ և պարզելու այդպիսի իրավունքների կարգավորումների հատման տիրույթը՝

վեր հանելով այն միջոցներն ու եղանակները, որոնք պետությունը պետք է ձեռնարկի դրանք ունեցություններից պաշտպանելու և հետևապես նաև՝ անձի արժանապատիվ գոյը ապահովելու համար:

6. Հանրային իշխանության՝ մարդու հիմնական իրավունքների, այդ թվում՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հիմնական հասցեատերը լինելը բխում է ինչպես մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային-իրավական, այնպես էլ՝ սահմանադրական հայեցակարգերից: Ներկայումս բոլոր պետությունները վավերացրել են մարդու իրավունքների վերաբերյալ առնվազն մեկ, իսկ պետությունների շուրջ ութսուն տոկոսը՝ չորս և ավելի կոնվենցիաներ, ինչը նրանց կողմից մարդու իրավունքների պաշտպանության, դրանց նկատմամբ հարգանքի երաշխավորման պարտավորությունը ստանձնելու հավաստումն է: Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական կարգավորումների ներքո պետությունները պարտավորություն են ստանձնում հարգելու, պաշտպանելու և կյանքի կոչելու դրանք: Առաջինը ենթադրում է, որ պետությունը չպետք է միջամտի հիմնական իրավունքների իրականացմանը կամ սահմանափակի դրանք: Երկրորդը նշանակում է, որ պետությունը պարտավոր է պաշտպանել հիմնական իրավունքների կրողը հանդիսացող անհատներին և նրանց խմբերին մարդու իրավունքների խախտումներից: Իսկ երրորդը՝ մարդու իրավունքները կյանքի կոչելու պարտավորությունը ենթադրում է, որ պետությունը պետք է իր ակտիվ գործողություններով բարենպաստ միջավայր ստեղծի մարդու հիմնական իրավունքների իրականացման համար:

7. Հանրային իշխանությունը, ի սկզբանե ստեղծված լինելով մարդու կողմից և մարդկային պահանջումների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցվածք ձևավորելու նպատակով, սահմանափակված է մարդու իրավունքներով, որոնք իրենց տեղն են գտել ինչպես մարդու իրավունքների ոլորտի հիմնարար միջազգային իրավական ակտերում, այնպես էլ մեր երկրի հիմնական օրենքում: Ըստ այդմ՝ պետությունը ստանձնում է մարդու իրավունքների հարգման, դրանց իրականացման ապահովման և պաշտպանության երաշխավորման առաքելությունը: Բացառություն չէ նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնարար իրավունքը: Նախատեսված լինելով ՀՀ իրավական համակարգի հիմնասյունը համարվող հիմնարար իրավական ակտերով՝ այն նախ և առաջ պարունակում է հանրային իշխանությանն ուղղված պահանջներ՝ սահմանելով պետության դրական և բացասական պարտավորությունները: Հանրային իշխանությունն է պարտավոր թույլ չտալ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ որևէ անօրինական միջամտություն, իսկ դրա սահմանափակումը կարող է կատարվել միայն ՀՀ Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մարդու իրավունքների ոլորտի միջազգային իրավական ակտերով նախատեսված պահանջների պահպանման պարագայում և դրանցով թույլատրելի սահմաններում: Հանրային իշխանությունն է կրում նաև մասնավոր անձանց միջև հարաբերությունների շրջանակներում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտումների բացառման համար ակտիվ գործողություններ իրականացնելու պարտավորությունը՝ այդպիսով հանդես գալով որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հիմնական հասցեատեր:

8. Միջազգային և ներպետական իրավական համակարգերի հարաբերակցության շրջանակում մասնավոր կյանքի անձեռնմխելիության

իրավական կարգավորումը էական կարևորություն (նշանակություն) է ստացել հետևյալ պատճառներով.

ա) միջազգային իրավական կարգավորման առկայությունը, մասնավորապես՝ այդ իրավունքը միջազգային մակարդակում ճանաչում ստացավ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որի 12-րդ հոդվածով ամրագրվեց. «Ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական ու ընտանեկան կյանքում կամայական միջամտության, իր տան, իր նամակագրության կամ իր պատվի ու հեղինակության նկատմամբ կամայական ոտնձգությունների: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանության իրավունք»: Հետագայում այս իրավունքն իր ամրագրումը ստացավ նաև 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին պակտում (հոդված 17), Եվրոպական կոնվենցիայում (հոդված 8), Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիայում (հոդված 11), Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին ԱՊՀ կոնվենցիայում (հոդված 9),

բ) միջազգային իրավական այս ակտերի կարգավորումների տրամաբանությունից հետևեց անցում մասնավոր կյանքի առանձին կողմերի՝ բնակարանի անձեռնմխելիություն, հաղորդակցության գաղտնիություն, անցում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի՝ որպես համալիր կատեգորիայի, համընդհանուր և համակարգային կարգավորման,

գ) գործնականում բոլոր երկրների սահմանադրական կարգավորումներում այդ իրավունքն իր ամրագրումը ստացավ, դրանով ազդարարվեց այդպիսի նորմատիվային հիմքի առկայության մասին:

9. Առաջադեմ պետությունները վաղուց միակարծիք են այն հարցում, որ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության և անվտանգության մակարդակը, իրավական նորմատիվ ակտերով և դատական պրակտիկայով դրա երաշխավորվածությունը իրավական պետության ձևավորման և կայացման անհրաժեշտ նախապայման է: Այս առումով հենց միջազգային իրավական փաստաթղթերում է իր մարմնավորումը գտել ողջ մարդկության համակցված փորձը՝ արտահայտելով մարդու իրավունքների դատական պաշտպանության հեղինակությունը, սոցիալական արժեքը, նշանակությունը: Միջազգային այդ ակտերում հռչակված գաղափարները (մարդկանց հավասարության, մարդկային արժանապատվության մասին և այլն) բնական իրավունքների մեջ դիտարկվում են որպես հիմնարար և անքակտելի հոգևոր արժեքներ, անբաժանելի և համընդհանուր սկզբունքներ և չափանիշներ, որոնք իրենց արտացոլումն են գտել շատ երկրների ազգային օրենսդրություններում:

Մինչ օրս չեն մշակվել համընդհանուր կամ տարածաշրջանային համաձայնագրեր, որոնք կհստակեցնեն մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի կարգավորումները: Կարծում ենք, որ իրավական մտքի զարգացման արդի գործընթացները, ի վերջո, հանգեցնելու են այս խիստ կարևոր իրավունքի համընդհանուր կարգավորիչ մեխանիզմների և գործիքակազմերի սահմանմանը և ազգային օրենսդրություններում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կապակցությամբ դրանց միատեսակ կիրառմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1) **Բաբայան Մ.Ա.**, Մասնավոր կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի տեսության և պրակտիկայի հիմնահարցերը, Մենագրություն, Եր.,

2024, 242 էջ,

2) **Բաբայան Մ.Ա.**, Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի բովանդակությունը և էությունը, «Պետություն և իրավունք», 2019., թիվ 1(83), էջ 18-27,

3) **Բաբայան Մ.Ա.**, Մասնավոր կյանքի իրավունքի ձևավորման և զարգացման պատմատեսական նախադրյալները, «Արդարադատություն», 2019., թիվ 3(49), էջ 27-34,

4) **Բաբայան Մ.Ա.**, Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական հիմքերը և պաշտպանության երաշխիքները օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում, «Օրենքի պատվար», 2020, թիվ 10, էջ 24-39,

5) **Բաբայան Մ.Ա.**, Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության երաշխիքները քրեական դատավարության ընթացքում, «Դատական իշխանություն», 2020, թիվ 9-10/255-256, էջ 23-32,

6) **Բաբայան Մ.Ա.**, Մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի ինստիտուտն արտասահմանյան երկրներում, «Օրենքի պատվար», 2021, թիվ 11, էջ 23-38,

7) **Բաբայան Մ.Ա.**, Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական մեխանիզմները, «Դատական իշխանություն», 2021, թիվ 5-6/236-264, էջ 58-64:

РЕЗЮМЕ
БАБАЯН МУШЕГ АВЕТИКОВИЧ
ПРАВО НА НЕПРИКОСНОВЕННОСТЬ ЧАСТНОЙ ЖИЗНИ
(СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ)

Диссертация посвящена исследованию проблем защиты конституционного права на неприкосновенность частной жизни человека и гражданина и баланса интересов лица, регулируемых международными, конституционными и внутригосударственными правовыми актами, характеризующими состояние этой защиты. Неприкосновенность частной жизни, сама по себе, является одним из основополагающих конституционных принципов формирования отношений между государством и личностью, что, в первую очередь, понимается как сфера общественного регулирования, в которой государство не устанавливает ту или иную степень свободы личности на основе общественного воздействия, а только применяет соответствующие ограничения, установленные Конституцией, в рамках процедуры реализации данного права.

В то же время, право на неприкосновенность частной жизни по своей сути является одним из сложных правовых институтов, на систематическое исследование сущности, содержания, значения, целей реализации и существующих в этой области норм которого направлена настоящая работа.

В связи с высокими темпами развития информационных технологий, а также в условиях создания глобальных коммуникационных сетей и формирования электронных баз персональных данных и увеличения скорости передачи и обработки этих данных, выявления рисков и угроз в области применения искусственного интеллекта и других робототехнических технологий в каждом государстве, в том числе - в Республике Армения, возрастает важность правовой защиты семейной и личной тайны, связанной с частной жизнью, в качестве информации с ограниченным доступом. При этом, необходимость соблюдения баланса между правом на неприкосновенность частной жизни и неприкосновенностью семейной жизни, защитой личных данных, свободой и конфиденциальностью общения, свободой получения и распространения информации возрастает с точки зрения определения границ вмешательства государственных органов и других лиц в частную жизнь.

Необходимость изучения вопросов неприкосновенности частной жизни обусловлена не только необходимостью защиты конституционного права каждого на неприкосновенность частной жизни, но и важностью баланса национальных и индивидуальных интересов Республики Армения, характеризующего состояние этой защиты.

В результате системного и сравнительно-правового анализа правовых актов и судебной практики, регулирующих отношения и являющихся предметом исследования, а также научного изучения взглядов и концептуальных подходов, циркулирующих в юриспруденции относительно природы и содержания неприкосновенности частной жизни, выявление правовых гарантий защиты права на неприкосновенность частной жизни человека и гражданина, представление предложений, направленных на совершенствование направлений правотворческой

и правоприменительной деятельности и существующих структур, направленных на усовершенствование правовой системы Республики Армения, само по себе, является важным достижением в рамках настоящей диссертации.

Учитывая то обстоятельство, что увеличение объема вмешательства органов государственной власти в сферу неприкосновенности частной жизни человека в условиях улучшения современных правовых систем и развития общественных отношений, видимо, может с одной стороны, оправдано как «необходимая мера», а с другой стороны, это может привести к негативным последствиям, следовательно, с учетом этих обстоятельств обусловлена актуальность, теоретическая и практическая значимость, структура и содержание обсуждаемых вопросов диссертационного исследования.

На современном этапе развития права, проблема заключается не столько в том, чтобы иметь единое определение проблемы, сколько в правильной оценке объема права на неприкосновенность частной жизни. В связи с этим, в рамках проблемы необходимо рассмотреть вопросы права личности на самоопределение, ее физической и моральной неприкосновенности, автономии, связей с другими лицами, что имеет принципиальное значение для субъекта регулирования права на неприкосновенность частной жизни, с точки зрения определения границ вмешательства органов публичной власти. В контексте сказанного, право на неприкосновенность частной жизни, как естественное и неотъемлемое право, необходимо понимать как предусмотренный и защищаемый Конституцией вид и способ возможного поведения человека и гражданина с целью самостоятельного решения вопросов в отношениях, в том числе и в отношениях, не предполагающих правового регулирования, с целью выбора характера собственной жизни и свободы общения, а также самоопределения и независимости - с целью определения своей частной жизни, в том числе в рамках отношений, не предполагающих правового регулирования.

То, что публичная власть является основным адресатом основных прав человека, включая право на неприкосновенность частной жизни, вытекает как из международно-правовых, так и из конституционных концепций прав человека. В настоящее время, все государства ратифицировали, по крайней мере одну, а около восьмидесяти процентов государств - четыре или более конвенций о правах человека, что является подтверждением того, что они взяли на себя обязательство защищать права человека и гарантировать их уважение. В соответствии с международно-правовыми нормами, касающимися прав человека, государства берут на себя обязательство уважать, защищать и претворять их в жизнь. Первый предполагает, что государство не должно вмешиваться в осуществление основных прав или ограничивать их. Второе означает, что государство обязано защищать отдельных лиц и их группы, являющиеся носителями основных прав, от нарушений прав человека. И, в-третьих, обязательство осуществлять права человека подразумевает, что государство должно своими активными действиями создавать благоприятные условия для осуществления основных прав человека.

Настоящее диссертационное исследование направлено на разработку концепции развития права в результате систематических исследований указанных проблем, что обуславливает ее актуальность.

SUMMARY

MUSHEGH BABAYAN

RIGHT TO THE INVIOABILITY OF PRIVATE LIFE (COMPARATIVE LEGAL ANALYSIS)

The dissertation is dedicated to the protection of the constitutional right to the privacy of a person and a citizen and the research of issue of balancing the interests of the person regulating the state of this protection with international, constitutional and domestic legal acts. The inviolability of private life itself is one of the fundamental constitutional principles of the relationship between the state and the person, which is first of all perceived as a public regulation, where the state does not define this or that degree of freedom of the person on the basis of public intervention, but applies relevant restrictions defined by the Constitution, within the framework of the procedure for the realization of the given right only.

At the same time, the right to inviolability of private life is one of the complex legal institutions, the essence, content, meaning, goals of realization and the systematic research of existing regulations in the field are the aim of this work.

Due to the high rate of development of information technologies, as well as the creation of global communication networks and the creation of personal data electronic databases and the increase in the data transfer and processing speed, the importance of legal protection of family and personal privacy as information with limited access related to private life increases in every state, including the Republic of Armenia, in the terms of identification of risks and threats in the field of the use of artificial intelligence and other robotic technologies. Moreover, the need to maintain a balance between the right to privacy and privacy of family life, protection of personal data, freedom and confidentiality of communication, freedom to receive and disseminate information increases from the point of view of determining the limits of interference in private life by state bodies and others.

The need to research privacy inviolability issues is due not only to the protection of everyone's constitutional right to privacy, but also to the importance of balancing the national and individual interests of the Republic of Armenia, which characterizes the state of this protection.

The emphasizing of legal guarantees for the protection of the right to privacy of a person and a citizen as a result of the systematic and comparative-legal analyzes of the legal acts regulating the relations subject to research and judicial practice, as well as the scientific study of the viewpoints and conceptual approaches in jurisprudence regarding the nature and content of the privacy of private life, the presentation of recommendations aimed at improving the directions of law-making and law-enforcement activities aimed at the modernization of the legal system and the existing structures of the Republic of Armenia is an important achievement within the framework of this dissertation.

Taking into account the fact that in the conditions of modernization of modern legal systems and the development of public relations, the increase in the volume of interventions by public authorities in the field of privacy of a person's private life can apparently be justified as a "necessary measure" on the one hand, and it can lead to negative consequences on the

other hand, the relevance of the dissertation research, its theoretical and practical significance its structure and the content of the discussed issues are due to the consideration of these circumstances.

The issue at the modern stage of the development of the law, is not to have a single definition of the issue, but mostly to correctly assess the extent of the right of inviolability to privacy. In this regard, within the framework of the issue, it is necessary to consider the issues of a person's right to self-determination, his/her physical and moral integrity, autonomy, and relations with other people, which is of fundamental importance to the subject of regulation of the right to the inviolability of private life, from the point of delineating the limits of the intervention of public authorities. In the context of what has been said, the right to inviolability of private life as a natural and inalienable right must be understood as a type and means of possible behaviour of a person and a citizen, provided for and protected by the constitution, in choosing the nature of one's life and freedom of communication, as well as self-determination and independence in determining one's private life, including for the purpose of independently resolving issues in relationships that do not require legal regulation.

Public authority being the main recipient of basic human rights, including the right to inviolability of private life, derives from both international-legal and constitutional concepts of human rights. At present, all states have ratified at least one convention on human rights, and about eighty percent of states have ratified four or more conventions, which is a confirmation of their obligation to protect human rights and guarantee respect for them. Under international legal regulations on human rights, states undertake to respect, protect and implement them. The first one implies that the state should not interfere with the implementation of basic rights or limit them. The second means that the state is obliged to protect individuals and their groups who are the bearers of basic rights from human rights violations. And the third, the obligation to implement human rights implies that the state must create a favourable environment for the realization of basic human rights with its active actions.

This dissertation research is aimed at the concept of the development of law as a result of systematic studies of the mentioned problems, which determines its relevance.

A handwritten signature in black ink on a light yellow background. The signature is highly stylized and cursive, with a large, sweeping initial letter that resembles a 'P' or 'S'. The rest of the signature is a series of connected loops and curves.

